ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՆՅՈՒԹԵՐ ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ՄԵԼԻՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուլիստանի մելիքությունը որոշակի դեր է խաղացել ուշ միջնադարի հայ իրականության մեջ, սակայն մելիքության պատմության շատ հարցեր առայժմ անբավարար են լուսաբանված։ Ադրբեջանական ՍՍՀ Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղում և նրա շրջակայքում պահպանված վիմագրական նյութերն այդ տեսակետից կարևոր արժեք են ներկայացնում և կարող են նպաստ բերել անցյալի որոշ իրողությունների լուսաբանմանը։

Գյուլիստանի ուշ միջնադարյան տիրապետողների տոհմային գերեզմանոցները մի քանի վայրերում են գտնվում։ Գյուղից քիչ հեռու, Հոռեկա վանքի (ԼՂԻՄ, Մարդակերտի շրջան, Թալիշ գյուղ) գլխավոր եկեղեցու արևմտյան պատի տակի մի խոշոր, անգարդ գերեզմանաքար տեղեկացնում է*.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԻՍԱՅ[Խ]ԱՆ ԱՂԻՆ
ՍԱ ԷՐ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՊԵԿԼԱՐԻՆ Թվ. ՌՄ

Իսախան աղայի անունը, ինչպես և նրա մելիքական ծագումը, ճշտվում է նրա կողակցի տապանագրի միջոցով, որը գտնվում է առաջինի մոտ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ||ՄԱՐԵԱՆԻՆ ՈՐ Է||
ԿՈՂԱԿԻՑ ԻՍԱ||ԽԱՆ... ՄԵԼԻՔ||...

Նշված վայրի համար սրանք մելիքական հիշատակությամբ հնագույն վիմագրերն են։ Մյուսների վրա, որ շքեղ հուշարձաններ են, տեղեկություններ չկան Մելիք-Բեգլարյանների միայն շառավիղների մասին (XIX դ.)։ Այսպես, օրինակ.

ա) «Գնդապետ Շամիրխան Փրիդոնեան Մելիք Բեգլարեան ի ցեղէն տիրապետող մելիքաց Գուլիստանի հանգեաւ ի տէր 30-ն օգոստոսի 1850 ամի ի ծն. 60-ամեայ հասակի»։

բ) «Գնդապետ Թեյմուրազ Փրեդոնեան Մելիք Բեգլարեանց յաղնուական ցեղէն տիրապետող մելիքաց Գուլիստանի հանգեաւ ի տէր 18 մարտի 1878 ամի ի ծննդենէ 75 ամաց հասակի» և այլն։

Գյուլիստան գյուղի եկեղեցու բակի գերեզմանոցի կենտրոնական մասը զբաղեցնում են Մելիք-Բեղլարյանների տապանաքարերը։ Ընդ որում, մի քանի քարերի վրա պարզ ընթեռնելի է Բեգլար (Պեկլար) անունը՝ առանց մելիքական կոչման, իսկ համեմատաբար նոր կողմում, դարձյալ մելիքներ չեն, այլ նրանց շառավիղները, բայց ուշագրավ տեղեկություններ են պարունակում մելիքների վերաբերյալ։ Գերեզմանաշարքի հնագույն կողմում առաջին խոշոր ու գեղեցիկ շիրմաքարը ունի հետևյալ մաշված գրությունը.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ||ՊԵԿԼԱՐԱՆՑ||.....||.....||ՌՃՆԷ

---

* Շնորհակալությամբ նշենք, որ հուշարձանների լուսանկարները սիրով մեզ է տրամադրել Գյուլիստանի բնակիչ Անատոլի Մակյանը։

1 Մ. Բարխուտարյանցը գրում է, որ Հոռեկի գերեզմանոցում «փայլուն տեղ գրված են Մելիք Բեկլարյանց բարեհամբավ տոհմի շիրիմներն յուրյանց գեղեցիկ արձաններով և երկար արձանագրություններով» (Մ. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 229), սակայն լի նշում դրանցից և ոչ մեկի տեքստը, չնայած այլ տեղերում բերում է նույնիսկ երկրորդական փաստեր։ Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ խոսքը, թերևս, մելիքյան շառավիղների վերաբերյալ հուշարձանների մասին է։



Նկ. 1.



Նկ. 2.

Այստեղ թվականը (ՌՃԿէ) հստակ չի երևում, բայց այն համոզիչ է թվում, քանի որ նույն պատի տակ գտնվող Գրիգոր Տանուտերի տապանաքարը ևս մոտավորապես նույն տարիքն ունի.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳՐԻԳՈՐ ՏԱՆՈՒՏԵՐ ||[ՈՐ ՊԱ]ՏՃԱՌ ԵՂԵԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ|| ....ՌՃԿԲ

Երկրորդ քարի տեքստը չնչված է, բայց պարզ երևում է թվականը՝ «ՌՄ»։ Երրորդ քարի վրա պարզ կարդացվում է.

ԱՅՍ Է ԴԱ|ԲԱՆ ԲԷԼ||ԱՐԱՅ ԳԻ||
ՐԻՔՈՐԻ ||ՈՐԴԻ ԲԷ||ԿԼԱՐԻՆ ||ԹՎԻՆ ՌՄԱ

Մեր ձեռքի տակ եղած նյութերի անբավարարության հետևանքով դժվարանում ենք ասել, թե ինչու 1718 և 1752 թթ. Բեգլարյաններն այստեղ հիշվում են առանց մելիքական կոչման։ Եթե առաջին դեպքում կարելի է ենթադրել, թե՝ 1718 թ. նրա՞նք չէին տեղի մելիքը, ապա 1752 թ. առումով նույնը ենթադրել չենք կարող, քանի որ հենց Հոռևկից բերված առաջին արձանագրությունը 1751 թ. համար նշում է՝ «Մելիք Պեկլար»։

Գերեզմանոցի համեմատաբար նոր մասում (դարձյալ կենտրոնում), Մելիք-Բեգլարյանների շառավիղների պատկառելի շիրմաքարերը (նկ. 1, 2, 3) տեղեկացնում են.

ա) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԷԳԼԱՐ ԲԷԳԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՄԵԼԻՔ
ՓՐԻԴՈՆԻՆ. ||ԹՈՌՆ ՔԱՋ ՄԷԼԻՔ ԲԷԳԼԱՐԻՆ, ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆ
ՂԱՐԱԲԱՂԻՆ, ||ՏԱՐԱՊԵՏՈՂ ԳՈՒԼՈՒՍՏԱՆԻՆ, ԾՆԵԱԼ Է ՅԱՄԻ
1809-ԻՆ ||ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԱՌԱՋԻՆԻՆ. ՎԱԽՃԱՆԵԱԼ Է 1874 ԹԻՒՆ
ՄԱՐՏ ԱՄՍԻ 8-ԻՆ

բ) ԱՅՍՏԵՂ ՀԱՆԳՈՒՄ Է
ԲԷԳԼԱՐ ԲԷԳ ՄԷԼԻՔ ԲԷԳ-
ԼԱՐԵԱՆԻ ՈՐԴԻ ՊԱՏԱ
ՆԻ ՓՐԻԴՈՆՆ.
Ծ. Ի 1-Ն ԱՊՐԻԼԻ 1856 ԱՄԻ
+ Ի 20-Ն ՄԱՐՏԻ 1878 ԱՄԻ։

դ) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՋԻՒՄՇՈ
ԻԴ ԲԷԳՆ Ի ՏՈՀՄԷՆ ՔԱՋ
ԱՋՆ ՄԵԼԻՔԲԷԳԼԱՐԵԱՆՑ
ԵԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՐԴԻ ԲԷԳ
ԼԱՐԲԷԳ ....ԾՆԱՎ 1831 ԱՄԻ
ԵԻ ՎԱ... 1866 .... ԲԵՐԻ
6-ԻՆ

Ինչպես վկայում են վերը բերված վիմագրերը, Գյուլիստանի մելիք Փրիդոնի որդիները եղել են բեգ կամ բարձրաստիճան զինվորականներ (գնդապետ Շամիրիան, գնդապետ Թեյմուրազ)։ Սակայն դա չի նշանակում, թե մելիքությունն սպառվել է Փրիդոնով։ Հայտնի է, որ նրա անժամանակ մահից հետո (1808 թ.) Ղարարաղի խանը Գյուլիստանի մելիք է նշանակել Փրիդոնի ավագ որդուն՝ Հովսեփին։ Ի դեպ, նա, թերևս, միակն էր, որի մելիքական իրավունքները ճանաչվեցին ցարական իշխանությունների կողմից (1824 թ., սեփականատիրական մի վեճի առիթով)[2]։

Հարկ է նշել, որ Բեգլար բեգի ծննդյան թվականը՝ 1809 թ. սեպտեմբերի մեկ, կարող է որոշ կասկած հարուցել նրա հոր՝ մելիք Փրիդոնի մահվան տարեթվի նկատմամբ (1808 թ.) կամ, ընդհակառակը, ճշտել, որ այդ մահը տեղի է ունեցել 1808 թ. նոյեմբերի վերջերին։

XVIII դ. 20-ական թվականների հայ ազատագրական շարժումների նշանավոր դեմքերից էր Աբրահամ Սպարապետը։ Վերջինիս գլխավորած ջոկատը ազատագրական շարժման ան-

---

[2] «Акты Кавказского археографического общества», т. VI, ч. I, Тифлис, 1874, § 1320.



Նկ. 3.

Նկ. 4.

կումից հետո էլ ոչ միայն Գյուլիստանի մելիքության սահմաններն է պատնեշել օսմանցիների առջև, այլև հաճախակի ու հանդուգն հարձակումներով տագնապի մեջ էր պահում թուրք նվաճողներին։ Ինչպես վկայում է 1729—1730 թթ. մի փաստաթուղթ, Աբրահամը ջանում էր նաև կապեր ստեղծել զանազան կողմերի հետ։

Կանխազգալով այդ վտանգը, թուրքական սուլթանը հատուկ հրովարտակով հանձնարարում է Գանձակի կառավարիչ Իբրահիմ փաշային՝ ոչնչացնել Աբրահամին ու նրա ուժերը։ Եվ, ըստ երևույթին, չվստահելով Իբրահիմ փաշայի զորությանը, Շաքիի և այլ նահանգների կառավարիչներին կարգադրում է՝ օժանդակել նրան[4]։

Ի՞նչ ճակատագիր է ունենում ըմբոստ հայրենասերը՝ հայտնի չէ։ Արդյո՞ք նվաճողները կարողանում են համատեղ ջանքերով ընկճել նրան։ Այս, ինչպես և Աբրահամի կոնկրետ անձնավորությանը վերաբերող որոշ հարցերում պարզություն չկա։

Աբրահամին ընկճելու, Գյուլիստանի մելիքությունն իրենց գերիշխանության տակ գցելու դեպքում թուրքերը, անկասկած, դատաստան կտեսնեին Սպարապետի (կամ, ինչպես նրանք անվանում էին՝ գյաուր Աբրահամի), թերևս, նաև նրա տոհմի հետ։ Սակայն պահպանված որոշ նյութեր թույլ են են տալիս ենթադրել, որ թուրքերին այդ չի հաջողվել։ Գյուլիստանի մոտ գտնվող Ամենափրկիչ անապատի առջև մինչև 1930-ական թվականները կանգուն էր Աբրահամի մարմարե խոշոր գերեզմանքարը, մի երեսին՝ զինավառ հեծյալների, մյուս երեսին՝ խնջույքի ճոխ տեսարանի քանդակներով ու արձանագրությամբ[5]։ Այսինքն՝ նա թաղվել է հայրենի գյուղում, պատվավոր ձևով և հիշատակն էլ շքեղորեն հավերժացվել է։

Նրա սերունդները նույնպես եղել են իշխողներ։ Գյուղում աև այսօր կանգուն և բնակելի է նրա որդու կառուցած ապարանքը, որի շինարարական արձանագրությունը (սենյակներից մեկի մուտքի ճակատաքարին) հայտնում է (նկ. 4).

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ ՇԻՆ||ԵՑԱՒ ԱՊՍՐԱՆՍ||
Ի ԹՎԻՆ Ռ ԵԻ||ՄԱ ԵՍ ՅԱԿՈԲՈՍ ԾԱՌԱՅ
ԻՇ||ԽՈՂ ԳԵՂՈՅՍ ՈՐԴԻ ԱԲՐԱ||ՀԱՄ
ՍՊԱՐԱՊԵՏԻՆ[6]

Իշխող է եղել Աբրահամ Սպարապետի ոչ միայն որդին, այլև թոռը՝ Հաթամ Յուզբաշին, որի քաջագործությունների մասին հիշողությունները գյուլիստանցիների մոտ դեռ թարմ են։ Վերոհիշյալ ապարանքն էլ հայտնի է ոչ թե կառուցողի, այլ նրա արժանի որդու՝ Հաթամի անունով և կոչվում է «Հաթամանց պիլորատոն»։

Հաթամ Յուղբաշու գերեզմանաքարը ևս Աբրահամ Սպարապետի գերեզմանաքարի բախտին է արժանացել, բայց նրա անունը հիշատակված է իր թոռան շիրմաքարի վրա՝ Գյուլիստանի եկեղեցու մոտ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԵՓԻՆ ՈՐ Է ՈՐԴԻ
ԱԲՐԱՀԱՄԻՆ ԻՒ ԹՈՌՆ ԷՐ ՀԱԹԱՄ
ՈՒՉԲԱՇԻՆ ՎԽԾ 1888 ԱՄԻ

Տապանագրից երևում է, որ Հաթամ Յուզբաշու որդին Աբրահամ անունն է կրել (թերևս ի հիշատակ Աբրահամ Սպարապետի)։

Գյուլիստանում և նրա շրջակայքում պահպանված պատմական շատ հուշարձաններ դեռևս կարոտ են ուսումնասիրության։

ԿԻՄ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

---

3 «Армяно-русские отношения в XVIII веке», т. II, ч. II, Ереван, 1967, էջ 321։

4 Նույն տեղում, էջ 321—322։

5 Այդ գերեզմանաքարը 1881 թ. իր ճանապարհորդության ժամանակ տեսել է Բաֆֆին (Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1963, էջ 586)։ Ըստ տարեց գյուլիստանցիների պատմածի՝ 1930-ական թվականներին այն ջարդուփշուր են արել Սպարապետի շառավիղները՝ իբր նախապապի իշխանական հիշատակը ոչնչացնելու համար։

6 Այս արձանագրությունը, որոշ աննշան շեղումներով, հրապարակված է նախկինում (Մակար Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 241)։